Ալեքսանդր Ծատուրյան

Սիրելի ես, նվիրական, դու իմ քաղցրը հայրենիք . . .

Սիրելի ես, նվիրական, դու իմ քաղցրը հայրենիք,
Քո սուրբ ծոցում անցուցել եմ ես շատ օրեր երջանիկ.
Քո երկինքը անամպ, պայծառ, քո դաշտերը ծաղկավուն
Ինձ շատ անգամ ոգևորել, կյանք են շնչել իմ հոգուն:

Սիրելի եք և դուք, կուսանք իմ հայրենի աշխարհի,
Դուք նազելի, հրրապուրիչ, չքնաղ դստերք հարավի.
Ես շատ անգամ սիրականիս սրրտիս սերը երգելով,
Ե՛վ ձեր սերն եմ ես հիացած՝ փառաբանել իմ երգով:

Թո՛ղ ես այժմ բախտահալած՝ երկրե երկիր թափառեմ,
Թո՛ղ ես այժմ սիրուց զրկված՝ օր ու գիշեր արտասվեմ,
Դուք ինձ համար դարձյա՛լ քաղցր եք և մի՛շտ քաղցր կը մնաք:
Օ՛, հա՛յ աշխարհ իմ հայրենի՛ք և դուք, չքնա՛ղ հայ կուսանք:

1890, 10 հուլիսի

Մոսկվա